ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/187

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարան
Մասնակից՝ «Արտ Պլաս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով գնանշման հարցում, ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ. թիվ 26/26-1/17417-2019 գրությամբ «Արտ Պլաս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարանի 18.10.2019թ. թիվ 1082 գրության հիման վրա, 24.10.2019թ. «Արտ Պլաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 25.10.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2019/178 համարի ծածկագիրը: 29.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2019թ.-ի թիվ 580-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2019/178 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 01.11.2019թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

04.11.2019թ.-ին կայացված որոշմամբ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2019/187 համարի ծածկագիրը և 07.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 07.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.11.2019թ.-ին:

2. ՀՀ Արարատի մարզ Այնթապի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարանը 18.10.2019թ. թիվ 1082 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Այնթապի համայնքապետարանի և <<ԱՐՏ ՊԼԱՍ>> ՍՊԸ-ի միջև 05 օգոստոսի 2019թ. N ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1 ծածկագրով պայմանագրի և 14 օգոստոսի 2019թ. Համաձայնագրի, համաձայն, պետք է իրականացվեր Պայմանագրի

հավելված 1-ով նախատեսված Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքները:

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի և տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից ներկայացված 02 հոկտեմբերի 2019 թվականի N 1 կատարողականի ակտը ստուգելու համար Այնթապի համայնքապետարանը սույն թվականի հոկտեմբերի 8-ի Այնթապ համայնքի ղեկավարի N 36 կարգադրության հիման վրա ստեղծել է հանձնաժողով, որով ստուգվել է Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքների թիվ 1 կատարողական ակտի աշխատանքների որակը:

Ստուգման ընթացքում հայտնաբերվել են, մի շարք բացթողումներ և խախտումներ, որը արձանագրվել է հանձնաժողովի անդամների և մասնակիցների կողմից:

Հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

1. Նախատեսվել է հատակի խարամաբետոնն շերտի կառուցում 50 մմ հաստությամբ, սակայն ստուգման ընթացքում պարզվել է, որ տեղում առկա չէ, խարամաբետոնե շերտի կառուցման փոխարեն լցվել է ավազե շերտ և ավազե շերտի վրա g/ավազային հարթեցուցիչ շերտով փակել, որը ուղղարկվել է փորձաքնեության: Փորձաքննության արդյունքներից պարզվել է, որ խարամաբետոնն շերտը բացակայում է, և g/ավազային հարթեցուցիչ շերտի ամրությունը չի համապատասխանում չափանիշներին:

2. Ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել է տեղադրել մետադապլաստե պատուհաններ սպիտակ 60մմ 4+4մմ ապակեփաթեթով արտերկիր, սակայն ստուգման ընթացքում հայնտաբերվել է, որ պատուհանները տեղական են և մինչ տեղադրելը պետք էր համաձայնեցվեր Պատվիրատուի հետ: Նշենք նաև, որ նախագծող կազմակերպությունները միավորի գները որոշելիս հիմնվում են ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող գնային տեղեկատվությունից, որում հստակ նշված է ատրերկրի և տեղական արտադրության միավորի գները:

3. Պատուհանների ամրությունը ստուգելու համար պատահականությամբ ընտրվել է պատուհանների փեղկերի լայնքերի մեջ ցինկապատ ներդիրները, որը տեղում բացակայել է:

*4. Նախատեսվել է պղնձե հաղորդալարեր տեղադրել բաժանիչ հիմքով հատվածքը 3*4մմ2 ՊՊՎ և 3*2,5մմ2 ՊՊՎ, որը տեղում կտրվել է և ուղղարկվել է փորձաքննության: Փորձաքննության արդյունքից պարզվել է, որ 3*2,5մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1.31 մմ2-է, 3*4մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1,47մմ2-է և 3*2,54մմ2:*

5. Նախատեսվել է միջնորմերի իրականացում 10սմ և 20 սմ պեմզբլոկով միջնորմերով, սակայն սպուգման ընթացքում չափվել է և տեղում պարզվել է, որ միջնորմերը եղել են համապատասխանաբար 9,2 և 19սմ հաստությամբ հաշվի առնելով պեմզաբլոկների շեղումը, հետագայում կատարողական ակտերը ներկայացնելուց ծավալները հիմք ընդունել պեմզաբլոկների նշված հաստությամբ:

Ելնելով վերը թվարկված խախտումներից, փարձագիտական եզրակացությունից և հիմք ընդունելով 05 օգոստոսի 2019թ. N ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1 պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի պահանջները Այնթապի համայնքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Արտ Պլաս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ «Արտ Պլաս» ՍՊԸ-ին ներկայացված գրության, «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված փորձարկման արձանագրության, Այնթապի համայնքի ղեկավարի 08.10.2019 թվականի թիվ 36 կարգադրության և արձանագրության պատճենները:

3. <u>«Արտ Պլաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.10.2019թ. գրությամբ դիմել է «Արտ Պլաս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ. թիվ 26/26-1/17417-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ ներկայանալով նաև նիստերին:

Ներկայացված դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևայլը.

«2019թ. օգոստոսի 5-ին «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում

կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 31.12.2019թ.:

Պայմանագրի 3.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 3.1.4. կետի «գ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի և Այնթապի համայնքապետարանի միջև կնքված «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով պայմանագրի հիման վրա ստորագրվել է համադրման ակտ՝ նախատեսված աշխատանքների ծավալներին համապատասխան:

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից 02.10.2019թ. Պատվիրատուին է ներկայացվել Թիվ 1 կատարողական ակտը (կցվում է), որտեղ նշվել են Պայամանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների մի մասի կատարումը: Նշված ակտը ստորագրված, հաստատված է «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի և շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության՝ «ԳՐԻՏԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից:

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից 02.10.2019թ. Պատվիրատուին ներկայացված Թիվ 1 կատարողական ակտով ամրագրված աշխատանքերի նախատեսված փաստաթղթերի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով՝ Այնթափ համայնքի ղեկավարի 08.10.2019թ. թիվ 36 կարգադրության հիման վրա ստեղծվել է հանձնաժողով:

Նշված հանձնաժողովը իրականացրել է ներկայացված Թիվ 1 կատարողական ակտում նշված աշխատանքների ստուգում և արձանագրել է մի շարք թերություններ:

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ին ուղղված 15.10.2019թ. թիվ 1068 գրությամբ (կցվում է) Այնթապի համայնքապետարանը նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4.-րդ կետի «գ» ենթակետի պահանջները:

Այնուհետև, Այնթապի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետևնա՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2019թ. օգոստոսի 5-ին «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի և ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարանի միջև կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով պայմանագիր:

Վերը նշված պայմանագիրը Այնթապի համայնքապետարանի կողմից 15.10.2019թ. թիվ 1068 գրությամբ միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի 3.1.4.-րդ կետի «գ» ենթակետի պահանջները, ըստ որի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է՝ մշակույթի տան կառուցման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունը՝ «ԳՐԻՏԻՆԳ» ՍՊԸ-ն, արդեն իսկ ստուգել էր կատարված աշխատանքները՝ համադրելով այն «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի և սահմանված փաստաթղթերի հետ և չի արձանագրել որևէ անհամապատաս¬խանություն կատարված աշխատանքի որակի և ծավալաթերթ-նախահաշվի միջև:

Այնինչ կասկածելի պայմաններում Այնթապի համայնքապետարանը, անտեսելով թե՛ կատարված աշխատանքների որակը և թե՛ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության 02.10.2019թ. թիվ 1 կատարողական ակտը ստորագրելու փաստը, որոշում է կայացրել ստեղծել հանձնաժողով, որը կիրականացնի ստուգումներ կատարված աշխատանքների որակի և ծավալաթերթ-նախահաշվի միջև /տես՝ 08.10.2019թ. թիվ 36 կարգադրություն և 15.10.2019թ. թիվ 1068 գրություն/:

Կասկածի տեղիք է տալիս նաև նման հանձնաժողովի կողմից աշխատանքի թերությունների մասին կազմված արձանագրության հիմնավորվածությունը, քանի որ տեխնիկական հսկողություն իրականացնող մասնագիտացված ընկերության՝ «ԳՐԻՏԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն կատարված աշխատանքի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ, իսկ թերությունները չեն արձանագրվել փորձաքննություն իրականացնելու և փորձագիտական եզրակացություն տալու իրավունք ունեցող կառույցի կողմից /հանձնաժողովը կազմված էր համայնքապետարանի աշխատակիցների կողմից, որոնք համապատասխան չունեին համապատասխան մասնագիտական որակավորում, ինչպես նաև ոմն քաղաքացուց, որը իբրև թե հանդիսանում էր ինժեներ/:

Ինչ վերաբերվում է կատարված աշխատանքների նկատմամբ արձանագրված թվով 5 «խախտումներին»՝ խարամաբետոնե շերտի բացակայությունը, մետաղապլաստե սպիտակ պատուհանների ապակեփաթեթավորումը արտերկրից չլինելու հանգամանքը, պատու-հանների փեղկերի լայնքերի մեջ ցինկապատ ներդիրների բացակայությունը, հաղորդալա-ների հաստության և պեմզբլոկի հաստության տարբերությանը, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ օրինակ մետաղապլաստե սպիտակ պատուհանների ամբողջ մասերը արտերկրի արտադրանք են և ՀՀ-ում իրականացվել են միայն այդ մասերի հավաքման աշխատանքներ, պեմզբլոկի հաստության տարբերությանը որը ըստ ստեղծված հանձնաժողովի կողմից արձանագրվել են 8մմ. տարբերություն՝ նույնպես չի համապատասխանում իրականությանը, այն, որ պատուհանների փեղկերի լայնքերի մեջ բացակայել է ցինկապատ ներդիրներ՝ նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ հենց արտադրողը իր կողմից արտադրող պատուհանների փեղկերում արդեն իսկ ներառում է ցինկապատ ներդիրներ և այդպես վաճառում գնորդին:

Ինչ վերաբերում է սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված «ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍՊԸ-ի կողմից տրված փորձագիտական եզրակացությանը, ապա, նախ, բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ փորձագիտական եզրակացությամբ արձանագրվել է Այնթապի համայնքապետարանի

համապատասխան հանձնաժողովի կողմից բացահայտված, իբրև թե թերությունների, միայն մի հատվածը: Բացի այդ, փորձաքննության հանձնված նմուշների նմուշագրումը կատարվել է «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի բացակայությամբ, ինչը թույլ է տալիս Ընկերությանը կասկածելու, թե իրականում «ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍՊԸ-ին ինչ նմուշներ են հանձնվել և վերջինիս կողմից ինչ նմուշներ են փորձաքննվել: Բացի այդ, «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ին չեն դարձրել մասնակից «ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացված փորձաքննությանը, ինչը նույնպես հիմքեր է տալիս կասկածելու իրականացված փորձաքննության օբյեկտիվությանը:

Այն, որ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի հետ կնքված «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» պայմանագիրը Այնթապի համայնքապետարանի կողմից լուծվել է ոչ իրավաչափ՝ փաստվում է նաև այն հանգամանքով, որ Կապալառուի կողմից կատարված աշխատանք է համարվում, Պայմանագրի 1.1. կետի համաձայն, Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման բոլոր աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք): Միևնույն ժամանակ Պայմանագրի 3.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Միևնույն ժամանակ Պայմանագրի 3.1.4. կետի «գ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառ-ված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

Բացի այդ, Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 31.12.2019թ.:

Վերոհիշյալից ուղղակիորեն հետևում է, որ Պատվիրատուի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ կատարված աշխատանքի միայն սկզբնական փոքր մասում, մինչդեռ Պայմանագրի Պայմանագրի 3.1.4. կետի «գ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել միայն այն դեպքում, երբ Կապալառուի կողմից կատարված աշխատանքը /ամբողջությամբ, ծավալաթերթ-նախահաշվով

նախատեսված ողջ աշխատանքը/ չի համապատասխանում նախագծահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «սղոգումների» արդյունքում արձանագրված այսպես ասած խախտումները արձանագրվել են առաջին փուլում կատարված մի հատված աշխատանքների միայն թվով 5 գործոնների վրա ու մնացած բոլոր աշխատանքների և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքներում առկա չեն եղել որևէ խախտումներ և այն կարևոր հանգամանքը, որ դեռևս աշխատանքները վերջացնելու համար առկա էր 2 ամսից ավելի ժամանակ, այն է 31.12.2019թ. /տես՝ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» պայմանագրի 1.3 կետ/, ուստի Պատվիրատուն պարտավոր էր առաջնորդվեր պայմանագրի 3.1.3. կետով և իր հայեցողությամբ սահմանել թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետ:

Գտնում ենք, որ նման պայմաններում Այնթապի համայնքապետարանի կողմից 15.10.2019թ. «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի հետ նշված պայմանագիրը միակողմանի լուծելը՝ Պայմանագրի 3.1.4.-րդ կետի «գ» ենթակետի պահանջների համապատասխան, իրավաչափ չէ:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Արտ Պլաս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի միջև 05.08.2019թ.-ին կնքվել է թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

www.gnumner.am համացանցային կայքում 17.10.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Այնթապի համայնքապետարանի և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի միջև 05 օգոստոսի 2019թ. թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով պայմանագրի և 14 օգոստոսի 2019թ. Համաձայնագրի

համաձայն՝ Մասնակիցը պետք է իրականացներ Պայմանագրի հավելված 1-ով նախատեսված Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքները:

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի և տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից ներկայացված 02 հոկտեմբերի 2019 թվականի N 1 կատարողականի ակտը ստուգելու համար Այնթապի համայնքապետարանը սույն թվականի հոկտեմբերի 8-ի Այնթապ համայնքի ղեկավարի N 36 կարգադրության հիման վրա ստեղծել է հանձնաժողով, որով ստուգվել է Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքների թիվ 1 կատարողական ակտի աշխատանքների որակը:

Ստուգման ընթացքում հայնտաբերվել են, մի շարք բացթողումներ և խախտումներ, որը արձանագրվել է հանձնաժողովի անդամների և մասնակիցների կողմից:

Հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

1. Նախատեսվել է հատակի խարամաբետոնն շերտի կառուցում 50 մմ հաստությամբ, սակայն ստուգման ընթացքում պարզվել է, որ տեղում առկա չէ, խարամաբետոնե շերտի կառուցման փոխարեն լցվել է ավազե շերտ և ավազե շերտի վրա g/ավազային հարթեցուցիչ շերտով փակել, որը ուղղարկվել է փորձաքնեության: Փորձաքննության արդյունքներից պարզվել է, որ խարամաբետոնն շերտը բացակայում է, և g/ավազային հարթեցուցիչ շերտի ամրությունը չի համապատասխանում չափանիշներին:

2. Ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել է տեղադրել մետադապլաստե պատուհաններ սպիտակ 60մմ 4+4մմ ապակեփաթեթով արտերկիր, սակայն ստուգման ընթացքում հայնտաբերվել է, որ պատուհանները տեղական են և մինչ տեղադրելը պետք էր համաձայնեցվեր Պատվիրատուի հետ: Նշենք նաև, որ նախագծող կազմակերպությունները միավորի գները որոշելիս հիմնվում են ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող գնային տեղեկատվությունից, որում հստակ նշված է ատրերկրի և տեղական արտադրության միավորի գները:

3. Պատուհանների ամրությունը ստուգելու համար պատահականությամբ ընտրվել է պատուհանների փեղկերի լայնքերի մեջ ցինկապատ ներդիրները, որը տեղում բացակայել է:

4. Նախատեսվել է պղնձե հաղորդալարեր տեղադրել բաժանիչ հիմքով հատվածքը 3*4մմ2 ՊՊՎ և 3*2,5մմ2 ՊՊՎ, որը տեղում կտրվել է և ուղղարկվել է փորձաքննության: Փորձաքննության արդյունքից պարզվել է, որ 3*2,5մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1.31 մմ2-է, 3*4մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1,47մմ2-է և 3*2,54մմ2:

5. Նախատեսվել է միջնորմերի իրականացում 10սմ և 20 սմ պեմզբլոկով միջնորմերով, սակայն ստուգման ընթացքում չափվել է և տեղում պարզվել է, որ միջնորմերը եղել են համապատասխանաբար 9,2 և 19սմ հաստությամբ հաշվի առնելով պեմզաբլոկների շեղումը, հետագայում կատարողական ակտերը ներկայացնելուց ծավալները հիմք ընդունել պեմզաբլոկների նշված հաստությամբ:

Ելնելով վերը թվարկված խախտումներից, փարձագիտական եզրակացությունից և հիմք ընդունելով 05 օգոստոսի 2019թ. թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի պահանջները Այնթապի համայնքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 17.10.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը հրապարակվել է թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով՝ **«Պայմանագրերում կատարված փոփոխություններ»** բաժնում՝ **«Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ»** բաժնի փոխարեն, վերնագրում նշելով՝ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ**019/1**» ծածկագրով պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ **19/1**» ծածկագրի փոխարեն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ. թիվ 26/26-1/17417-2019 գրությամբ «Արտ Պլաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարանի և «Արտ Պլաս» ՍՊԸ-ի միջև 05.08.2019թ.-ին կնքված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը Այնթապի համայնքապետարանը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Մասնակցի կողմից թույլ տված խախտումները, փորձագիտական եզրակացությունը՝ Պայմանագրի 3.1.4 կետի «գ» ենթակետի դրույթների հիման վրա:

www.gnumner.am համացանցային կայքում 17.10.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը հրապարակվել է թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով՝ **«Պայմանագրերում կատարված փոփոխություններ»** բաժնում՝ **«Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ»** բաժնի փոխարեն, վերնագրում նշելով՝ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ**019/1**» ծածկագրով պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ **19/1**» ծածկագրի փոխարեն:

Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ կողմերի միջև կնքված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումը Հանձնաժողովի կողմից հրապարակվել է տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, **«Պայմանագրերում կատարված փոփոխություններ»** բաժնում՝ **«Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ»** բաժնի փոխարեն, վերնագրում նշելով՝ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ**019/1**» ծածկագրով պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ **19/1**» ծածկագրի փոխարեն:

Այն դեպքում, երբ Պայմանագրի 8.11-րդ կետի դրույթների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Պայմանագրի 8.11 կետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.10.2019թ. թիվ 26/26-1/17417-2019 գրությամբ «Արտ Պլաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**